


Արցախյան 44-օրյա պատերազմի արձագանքը թուրքահայ «Ակոս» շաբաթաթերթում

Օհանյան Տախյանա Յ.

Վանաձորի Հ. Թումանյան անվան պետական համալսարանի
Պատմության ամբիոնի հայցորդ (Վանաձոր, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0001-0528-3041>
tanya.ohanyan.1998@mail.ru

ՀՏԳ՝ 94(495); EDN: LQJZBB

DOI: 10.58587/18292437-2024.6-81

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Արցախ, Հայաստան, Ադրբեջան, բանակ-
ցային գործընթաց, զինադադար, տեղեկատվական պատերազմ, պարտություն,
համաձայնագիր:

Отклики на 44-дневную Карабахскую войну в еженедельной газете “Акос”

Оганян Татьяна Ю.

Соискатель кафедры истории,

Ванадзорский государственный университет имени О. Туманяна (Ванадзор, РА)

Аннотация: Арцахская 44-дневная война 2020 года получила широкий отклик в издающейся в Турции еженедельной газете "Акос". Газета представляет события, происходящие в Армении и Арцахе, на основе информации, полученной из Армении, а также публикаций международных СМИ. "Акос" подробно описывает ход войны, показывает отношение обоих обществ к войне, а также освещает роль Турции в 44-дневной войне. Газета сравнивает публикации армянских и азербайджанских СМИ и подчеркивает, что армянское общество информировано о ходе войны, а азербайджанское общество находится в информационном вакууме. «Акос» рассматривает соглашение от 9 ноября 2020 года как «договор о поражении» Республики Армения, но в таком случае считает неприемлемой смену власти в Армении.

Ключевые слова и словосочетания: Карабах, Армения, Азербайджан, переговорный процесс, перемирие, информационная война, поражение, соглашение

Responses to the 44-day Karabakh war in the weekly newspaper “Agos”

Ohanyan Tatyana Y.

Applicant for the Department of History,

Vanadzor State University after H. Tumanyan (Vanadzor, RA)

Abstract. The 44-day Artsakh war of 2020 received wide coverage in the Turkish weekly newspaper "Agos". The newspaper presents the events taking place in Armenia and Artsakh based on information received from Armenia, as well as publications of international media. "Agos" describes the course of the war in detail, shows the attitude of both societies towards the war, and also highlights Turkey's role in the 44-day war. The newspaper compares the publications of Armenian and Azerbaijani media and emphasizes that the Armenian society is informed about the course of the war, while the Azerbaijani society is in an information vacuum. "Agos" considers the agreement of November 9, 2020 as a "defeat agreement" of the Republic of Armenia, but in this case, it considers the change of power in Armenia unacceptable.

Keywords & phrases: Karabakh, Armenia, Azerbaijan, negotiation process, ceasefire, information war, defeat, agreement

Նախաբան

2020 թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան Ադրբեջանը նախապես պլանավորված զինված հարձակում իրականացրեց Արցախի շփման գծի ողջ երկայնքով, որը տևեց 44 օր: Հայ-ադրբեջանական ռազմական հակամարտությունը լայն արձագանք գտավ Մերձավոր Արևելքի հայկական մամուլում, այդ թվում՝ Թուրքիայում լույս տեսնող «Ակոս» շաբաթաթերթում: Շաբաթաթերթի դիրքորոշումը Արցախյան 44-օրյա պատերազմի վերաբերյալ, հայ պատմագիտության կողմից ուսումնա-

սիրված չէ, որին անդրադարձ է արվում սույն հոդվածում:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ հայկական Արցախն անարդարացիորեն բռնակցված է Ադրբեջանին, Արցախյան հիմնախնդիրը լուծված չէ ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա, հայ պատմագիտության համար կարևոր է բացահայտել սփյուռքահայ մամուլի կարևոր լրագրերից «Ակոս» շաբաթաթերթի դիրքորոշումը արցախյան 44-օրյա պատերազմի վերաբերյալ:

«Ակօս» շաբաթաթերթը

«Ակօս»-ը հասարակական, քաղաքական շաբաթաթերթ է, որը լույս է տեսնում 1996 թվականից Ստամբուլում, թերթի հիմնադիր-խմբագիրը Հրանտ Դինքն է: Թերթը նախատեսված է հիմնականում թրքախոս հայության համար, որը մշտապես անդրադառնում է Հայաստանում և Արցախում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, միջազգային անցուղարձին, թուրքահայ համայնքի կյանքին [1, էջ 49]:

44-օրյա պատերազմը

«Ակօս» շաբաթաթերթը 44-օրյա պատերազմի սկզբում հրապարակած «Ոչ կարճատև պատերազմ» վերնագրով հոդվածում նշում է, որ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հաճախ է խոսում ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող հայ-ադրբեջանական բանակցությունների անարդյունավետության մասին: Նա քանիցս սպառնացել է, որ Ադրբեջանն ի վիճակի է կորցրած 7 շրջանները գեներլ ուժով վերադարձնելու հնարավորության մասին: Այս հայտարարություններով հանդերձ «Ակօս»-ը նշում է, որ ըստ Ի. Ալիևի՝ նախահարձակ կողմը հանդիսանում է Հայաստանը և այս տեսակետը պաշտպանում են թուրքական իշխանությունները և լրատվամիջոցները [2]:

Ըստ թերթի՝ Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը լրագրողների հետ հարցազրույցի ժամանակ հայտարարել է, որ պաշտպանության բանակը պայքարում է ոչ միայն Ադրբեջանի զինված ուժերի, այլ նաև՝ Թուրքիայի դեմ: Ըստ նրա՝ գաղտնիք չէ, որ Թուրքիան Սիրիայի տարածքով վարձակալներ է տեղափոխում Ադրբեջան: 2020 թ. հուլիսյան պատերազմից հետո կազմակերպված թուրք-ադրբեջանական գորավարժություններից հետո, բազմաթիվ թուրք սպաներ և թուրքական զինամթերք մնացին Ադրբեջանում, սակայն այս հանգամանքը հերքվում է երկու «եղբայր» պետությունների իշխանությունների կողմից» [2]:

«Ակօս»-ի դիտարկմամբ՝ Թուրքիայի միջամտությունը արցախյան նոր պատերազմին հաստատում է նաև ՀՏՓ կուսակցությունից Թուրքիայի մեջլիսի պատգամավոր Կարո Փայլանը, ով հայտարարել է «*Երբ արար աշխարհը պատգամներ է փոխանցում առկա տարակարծությունը խաղաղ միջոցներով վերացումը ապահովելու համար, Թուրքիան ցանկանում է քենզին լցնել կրակի վրա*» [2]: Նրա կարծիքով այս պատերազմում նույնպես, հերթական անգամ ակնատես ենք լինելու «Դիվանագիտություն» կոչված խաբկանքին, քանի որ հակամարտությունը բանակցությունների ճանապարհով կարգավորելու կոչը պետք է ուղղված լինի ոչ թե կողմերին հավասարապես, այլ նախ և առաջ

հարկավոր է մեղադրել ու դատապարտել նախահարձակ կողմին՝ տվյալ դեպքում Ադրբեջանին: Կ. Փայլանի դիտարկմամբ պատերազմը դիվանագիտական միջնորդությամբ չի ավարտվի, որովհետև նախագահ Ի. Ալիևը պատրաստ է «շարունակել պայքարել, ազատագրելու համար իր հողերը», իսկ վարչապետ Ն. Փաշինյանը մերժել է ՌԴ նախագահ Վ. Պուտինի միջնորդությունը [2]:

Պատերազմի առաջին օրերին Հայաստանից մեծ թվով կամավորներ մեկնեցին պատերազմական ճակատ՝ Արցախի պաշտպանության համար: «Ակօս»-ի կարծիքով ճակատ մեկնողների մեջ տիրում է այն համոզմունքը, որ «սակենաց-մահու պայքար է և կարելի չէ զիջել հայրենի երկրի պաշտպանութիւնը թշնամու դիմաց»: «Ակօս»-ի հայերեն բաժնի պատասխանատու Բագրատ Էսոբյանը «*Հայերը դեպի ճակատ կիսգնեն՝ իսկ ադրբեջանցիք այլուր*» հոդվածում գրում է, որ բազմաթիվ ազդանշաններ կային. Ադրբեջանի անխուսափելի հարձակման կապակցությամբ: Հայաստանի արտաքին գործերի նախարար Չ. Մնացականյանը Կահիրեում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է, որ թուրքական իշխանությունները Սիրիայից դեպի Ադրբեջան վարձկան զինվորներ են տեղափոխել: Բացի այդ, թուրքական թերթերը հրապարակել են այդ զինյալ խմբերի՝ Այնթափում կենտրոնանալու և այնտեղից Ադրբեջան թափանցելու մասին լուրեր և տեսանյութեր: Արցախի վրա հարձակումը նաև որոշակի ազդանշաններ ուներ, քանի որ օրեր առաջ Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հայտարարել էր Արցախի հարակից յոթ տարածքներից հինգը լքելու անհրաժեշտության մասին [2]:

Ըստ «Ակօս» թերթի՝ ակնհայտ է, որ Ադրբեջանը միջազգայնորեն ճանաչված բոլոր կանոնները կխախտի, առանց վարանելու թիրախ կդարձնի Արցախի քաղաքները և խաղաղ բնակչությանը, քանի որ կռվի առաջին իսկ րոպեներից փորձում է կեղծ լուրեր տարածել և հանրությանը համոզել, որ Հայաստանն է հարձակվում ադրբեջանական բնակավայրերի վրա:

Թերթն ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ պատերազմի նկատմամբ երկու երկրների հասարակության վերաբերմունքը խիստ տարբեր է: Ադրբեջանի իշխանությունները արգելել են իրենց քաղաքացիների բոլոր թոնիքները արտերկիր, մինչդեռ Հայաստանում այլ տրամադրություններ են: Հայաստանյան լրատվամիջոցները բազմաթիվ տեսանյութեր են հրապարակում հայ կամավորների ճակատ մեկնելու մասին: Ելնելով այս իրողությունից «Ակօս»-ը եզրակացնում է «*պատերազմի նշանակությունը բոլորովին տարբեր է երկու երկրների հասարակության համար*» [2]:

«Ակոս»-ը «հրճվանքով» հրապարակում է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի պատգամները հանուն հայրենիքի պաշտպանության: Թերթի կարծիքով «ազգի համար լինել չլինելու խնդրի վերաձված Արցախի պաշտպանության» դիրքերից հայ հոգևորականության հանդես գալը ապացուցում է Հայ առաքելական եկեղեցու ազգային դիմագիծը: Դրա վկայությունը «Ակոս»-ը համարում է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի ուղերձը, որտեղ ասվում էր «Արցախ աշխարհի ազատությունն ու անկախությունը, խաղաղ ու ստեղծագործ կյանքը, մեր սրբազան արժեքները պաշտպանելու գոյանարտն ենք վերստին մղում այս օրերին, նորօրյա մեր պատմության այս վճռական պահին» և կոչ է անում «մեր ժողովրդին միասնության և քաղաքական բոլոր ուժերին՝ ստորադասելու հակասությունները հանուն հայրենիքի պաշտպանության» [2]:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն իր խոսքում շեշտում էր «Մեր հայրենիքի անբաժան մաս կազմող Արցախը վտանգի է ենթարկված, մեր ժողովուրդը Հայաստանում թե Միջուռքում չի կարող սուկ զգացական սահմաններում իր գորակցությունը հայտնել» և կոչ է անում «յուրաքանչյուր հայ իր արեան կանչով և իր հայրենիքին նկատմամբ ունեցած անխախտ հաւատարմությանն է մղուած, գործնապես իր օժանդակությունը բերէ հայոց բանակի առաւել հզօրացման» [2]:

«Ակոս»-ը հայոց կաթողիկոսների խոսքից զատ գետեղում է նաև Կ.Պոլսի հայոց Պատրիարքարանի ուղերձը, որտեղ ցավալի իրողություն էր համարվում, որ 30 տարիների ընթացքում Հայաստանն ու Ադրբեջանը չկարողացան բանակցությունների սեղանի շուրջ լուծել Ղարաբաղի հարցը: Թերթի կարծիքով նոր բախումը «ահավոր կործանման» նոր պատճառ կդառնա, ուստի աղոթում են, որ ժամ առաջ պատերազմը դադարի ու խաղաղություն հաստատվի: Պատրիարքարանի դիվանը հանդես է գալիս անհապաղ պատերազմը դադարեցնելու օգտին՝ համարելով դա միանգամայն հնարավոր, քանի որ «Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդները երկար դարեր խաղաղության մեջ ապրելու և գոյատևելու փորձառություն ունեն: «Մեր ամենամեծ մտադրանքն ու աղոթքն է, ասվում էր դիվանի ուղերձում,- որ «Եղբայր Ազերի և Հայ ժողովուրդները» ասույթ ներկա սերունդների կողմից ևս վերահաստատվի» [2]: Դիվանի ուղերձը, ի տարբերություն Գարեգին Բ և Արամ Ա կաթողիկոսների հայրենասիրական բնույթ ունեցող, հայությանը համախմբման կոչելու և հայոց բանակին հաղթանական մարտիկու ուղերձից, կարևորում է Թուրքիայի դերը հայադրբեջանական հակամարտության կարգավորման գործում: «Այս խաղաղության հաստատման

մեջ,-ասվում է ուղերձում,- Թուրքիայի ստանձնելիք դերը անժխտելի կարևորություն է» դառնում: Որպեսզի Կովկասը դառնա խաղաղության վայր, միաժամանակ անհրաժեշտ է «խաղաղության հաստատման գործում «շահագրգիռ պետությունների և ժողովուրդների փոխադարձ գոհողություններն ու ներդրումը» [2]:

«Ակոս»-ի համոզմամբ՝ «Թուրքիայի միջամտությամբ» սկսված պատերազմը «ստացավ բոլորովին տարբեր բնույթ», դուրս եկավ հայադրբեջանական հակամարտության շրջանակներից և «վերածվեց պատմական հաշվեհարդարի հայերի ու թուրքերի միջև»: Դրա վկայությունը թերթը համարում է ադրբեջանական դրոշներով ծածկված բազմաթիվ մեքենաների երթը դեպի Պատրիարքարանի շենքը, որը «պատճառ դարձավ բուռն հակազդեցությունների»: Անգամ Թուրքիայի մամուլը «քննադատեց այդ երթը հասկապես մտահոգություն հայտնելով Թուրքիայի հայ քաղաքացիների կյանքը վտանգելուն դեմ» [2]: Չնայած դրան Թուրքիայի տարբեր քաղաքներում շարունակվում են «իբր թե Ադրբեջանին զորակցելու ցույցեր», որոնք տեղի են ունենում «Հայաստանը դրսևորումներով» [3]:

«Ակոս»-ը գրում է, որ թեպետ հայկական կողմը նախահարձակ չի եղել, սակայն թե՛ ադրբեջանական, թե՛ թուրքական լրատվամիջոցները՝ Թուրքիայի ռադիոն, հեռուստաընկերությունը, Անատոլու Աժանս լրատվական գործակալությունը, Արցախյան պատերազմի մասին բոլոր լուրերը ներկայացնում են նույն վերնագրով՝ «Հայաստանը հարձակվեց Ադրբեջանի վրա» [2]:

Թուրքական մամուլը գրում է «Ակոս»-ը անտեսելով պատերազմի առաջին օրերին հայերի կորուստները, իր բազմաթիվ հրապարակումներում տպավորություն է ստեղծում, թե միայն ադրբեջանցիներ են զոհվում: Թերթի դիտարկմամբ՝ թուրքական իշխանամետ մամուլը տպագրում է բացառապես հակահայկական հրապարակումներ, որոնցից «ԵՆԻ Շաֆաք» թերթի խմբագիր Ի. Գարալյուլի՝ «Մի հրթիռ սխալմամբ կհարվածի Երևանի կենտրոնին» «թվիթերյան գրառումը մեծ թվով գնահատանքի արժանացավ»: Ավելին, Թուրքիայի նախագահ Ռ. Էրդոգանը հայտարարեց, որ «Հայաստանը մեկ անգամ ևս ապացուցեց, թե տարածաշրջանում խաղաղության դիմաց մեծագույն սպառնալիքն է»: Ստամբուլի քաղաքապետը, մի շարք կուսակցություններ իրենց հրապարակումներում հանդիմանում են արցախցիներին, որոնք գնդակոծում են խաղաղ ադրբեջանական բնակավայրերը: Այս ամենը, նկատում է «Ակոս»-ը, նպաստում է այն բանին, որ «թուրք հասարակությունը հեշտությամբ միանում է պետության թեղադրած բոլոր միտքերուն» [2]:

Արցախյան պատերազմի ընթացքը լուսաբանելիս «Ակօս»-ը անդրադառնում է ոչ միայն ճակատում ընթացող ռազմական գործողություններին, այլև տեղեկատվական պատերազմին: Թերթը ստացված տեղեկատվական հակասական լուրերի կապակցությամբ գրում է. «Ադրբեջանը մշտապես հայտարարում է ազատագրված տարածքների մասին, որի վերաբերյալ հայկական կողմը փոխանցում է բոլորովին այլ տեղեկություններ: Հայկական կողմը պաշտոնապես հաղորդում է գոհվածների անունները, փոխարենն Ադրբեջանը նախընտրում է լուռ մնալ» [3]: Ուստի թերթը կոչ է անում «գզոն լինել բոլոր սպաստեղեկատվական ծուղակներին» [2]: Ի հակադրություն թուրքական մամուլի հակահայկական տեղեկատվության, «Ակօս»-ը «Սա վերջին պատերազմն է լինելու և հաղթական պատերազմ է լինելու» հրապարակման մեջ ներկայացնում է ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին համանախագահ Մեթյու Բրայզայի, հայ լրագրողների ու բազմաթիվ հայերի դիրքորոշումն ու գնահատականները պատերազմի վերաբերյալ, ովքեր պատերազմի սանձազերծողը իրավացիորեն համարում էին Ադրբեջանին:

Ըստ «Ակօս»-ի՝ Հայաստանում պատերազմական գործողությունների ընթացքի և ունեցած մարդկային կորուստների մասին ներկայացված տեղեկատվության նկատմամբ կա անվերապահ վստահություն, քանի որ իշխանությունները չեն թաքցնում ռազմաճակատում տիրող իրավիճակը, փոխարենը թուրքական և ադրբեջանական լրատվական դաշտի լռության շնորհիվ Ադրբեջանի հանրությունը շարունակում է մնալ անտեղյակ իրենց գոհերի քանակի մասին [3], կարելի է ասել գտնվում է տեղեկատվական շրջափակման մեջ [4]:

Իրականությունն այն է, գրում է թերթը, որ «մարտնչող երկու կողմերը կրում են ծանր կորուստներ, սուգ ու շիվան պատճառելով իրենց ընտանիքներին» [3]:

«Ակօս»-ը «Ձեռքը կամ զինվորի կամքը» հոդվածում այն միտքն է առաջ քաշում, որ «Ղարաբաղյան պատերազմը ունի տխուր երևույթ, ըստ որի՝ մարտնչող կողմերը հավասարապես համոզված են, որ պայքարում են հայրենիքի ազատագրման համար: Ադրբեջանցի զինվորը ցանկանում է ազատագրել իր երկրի գրավյալ տարածքները, հայ զինվորը նույնպես: Կռվախնձոր Ղարաբաղը հայկական հող է, բայց ոչ Հայաստան»: Անդրադառնալով Արցախի պատմությանը թերթը գրում է, որ դարեր առաջ ենթարկվելով ռուսաց ցարի կամ պարսից շահի արշավանքին՝ միշտ պահել է իր ինքնիշխանությունը: Անգամ Ստալինի քաղաքական նկրտումներով պատրաստված ազգային քարտեզագրության մեջ շարունակել է ինքնավար մնալ: Դա չի նշանակում, գրում է «Ակօս»-ը, որ անկախացած

Ադրբեջանը կարող է հեշտությամբ կուլ տալ Արցախի ինքնավարությունը, ինչպես դա տեղի ունեցավ Նախիջևանի հետ: «Ակօս»-ը համոզմունք է հայտնում, որ «Ինչպես Վրաստանին չի հաջողվել Հարավային Օսեթիան, Աբխազիան կամ Աջարիան կուլ տալ, այնպես էլ Ադրբեջանը դատապարտված է ճանաչել Ղարաբաղի անկախությունը» [3]:

«Ակօս»-ը «Խեղդամահ ենք ատելությունից» հոդվածում անդրադառնում է պատերազմի առաջին օրերին Թուրքիայի մայրաքաղաքում տիրող հակահայկական մթնոլորտին, որը բացահայտ ատելություն է սերմանում թուրք բնակչության շրջանում: Հոդվածագիրն առաջ քաշելով հաշտություն հաստատելու անհրաժեշտության գաղափարը, նշում է, որ կողմնակից է «ազատ և անկախ Հայաստանի» և «ազատ և անկախ Ադրբեջանին» բայց իր «Թուրքիայի համար շատ դժվար է: Ինչ մեծ հիասթափություն»: Հեղինակի կարծիքով Թուրքիան պետք է երկու հարևաններին հորդորի՝ «Եկեք լուծենք այս խնդիրը» [3]:

Փաստորեն «Ակօս»-ը այն կարծիքին է, որ հայ-ադրբեջանական պատերազմի դադարեցումը և արցախյան խնդրի լուծումը կախված է ոչ թե ԵԱՀԿ Մինսկի խմբի, կամ մեծ տերությունների միջնորդությունից, այլ՝ Թուրքիայի կողմից:

«Մեր միակ դաշնակիցը Տեր Աստվածն է» հոդվածում նշում է, որ արցախյան պատերազմին Թուրքիայի մասնակցությունը, սիրիական վարձկանների ներգրավվածությունը, թուրք զենեարկների՝ պատերազմական գործողությունները դեկավարելը չեն կոտրի հայ զինվորի մարտական ոգին, ով հերոսության բազմաթիվ օրինակներ է դրսևորել: Չնայած դրան՝ «աշխարհը լուռ դիտում է, թե ինչպես է մեր փոքրաթիվ ազգը 105 տարի անց կասեցնում նոր ցեղասպանությունը»: Դա բոլորի պատերազմն է, որը պետք է անհապաղ դադարեցվի, բայց քանի որ այդ ուղղությամբ միջազգային հանրությունը և գերտերությունները ոչինչ չեն անում, «այս օրհասական պահին մեր միակ դաշնակիցը մեր Տեր Աստվածն է» [3], եզրակացնում է հոդվածագիրը: Միջազգային հանրության լռության պատճառներին է նվիրված «Ակօս»-ի «Խաղաղությունից մինչև պատերազմ, պատերազմից մինչև խաղաղություն» հոդվածը: Այստեղ մոլորություն է համարվում տարածված այն կարծիքը, թե ռազմական ճանապարհով հնարավոր է «հրական և վերջնական խաղաղության հասնել»: Հեղինակի կարծիքով իրական հաղթանակ կարելի է ապահովել միայն Հայաստանի, Արցախի և Ադրբեջանի հասարակությունների համաձայնության դեպքում [3]: «Ակօս»-ն անդրադառնում է հոկտեմբերի 10-ին ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի

հայտարարությանը, ըստ որի՝ երկար քննարկումներից հետո հակամարտող կողմերի միջև ձեռք է բերվել մարդասիրական բնույթի զինադադար, որը «գրեթե երբեք չգործադրվեց փոխադարձ հրթիռակոծությունների հետևանքով» [4]:

Թերթը նկատում է, որ թուրքական մամուլում սկսել են հաճախակի խոսել ռազմաճակատում Ադրբեջանի ռազմական հարձակումների ապարդյուն լինելու մասին: Ադրբեջանը թեև Արցախի պաշտպանության բանակին գերազանցում է իր սպառազինությամբ, բայց չի կարողանում վճռական խաղաղության հասնել:

«Ալյուս»-ի լրագրողները կարծիք են հայտնում, որ Ադրբեջանի կայծակնային պատերազմը չպսակվեց հաջողությամբ: Եթե Ադրբեջանը պատերազմի առաջին օրերին չի կարողացել լուծել իր առջև դրված խնդիրը, ապա նույնիսկ շաբաթներ անց չի կարողանա լուծել: Թերթը մեջբերում է վերլուծաբան Աշոտ Ասատրյանի խոսքերը, «Թշնամու կողմից մենք բախվել ենք մի անգրագետ գործողության, որը չունի ո՛չ հաշվարկ, ո՛չ որոշում, ո՛չ կոնկրետ նպատակ: Մեր ոչ բարով թշնամին արդեն կորցրել է այնքան կենդանի ուժ և ռազմական տեխնիկա, որ եթե դրա արդյունքում ինքը նույնիսկ ամբողջ Արցախին տիրեր միևնույնն է դա չէր արդարացնելու իր գործողությունները» [5]:

«Ալյուս»-ի դիտարկմամբ անկախության տարիներին Հայաստանում տիրող օլիգարխիական համակարգը սառը ցնցուղի ազդեցություն ունեցավ, մարդիկ սկսեցին թալանել սեփական երկիրը: 2018 թ. Թավշյա հեղափոխությունը նրանց հույս ու հավատ պարզեց և «եթե սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմի ավարտին հաջողվի հաշտություն պարտադրել թշնամուն, Հայաստանը մեծ քայլերով պիտի հաղթահարի առաջին 30 տարիների հիսաթափությունը» [5]:

Թերթի համոզմամբ Էրդոդանը հրաշալի գործընկեր է Եվրոպայի համար, ուստի «միամտություն կլինի կարծել թե քրիստոնյա Եվրոպան նախապատվություն կտա քրիստոնյա Հայաստանին... Ստիպված ենք երևույթները դիտել ու մեկնաբանել համաշխարհային չափորոշիչներով: Էրդոդանն իբրև աջակողմյան ամբոխավարության հաջող գործիչ ունի իր հատուկ դերակատարությունը, որը վերջին հաշվով ձեռնտու է ժամանակակից արևմտյան քաղաքականությանն ու գաղափարախոսությանը» [6]: Նրա կարծիքով հայկական դիվանագիտության բոլոր ջանքերը ուղղվելու են համաշխարհային հանրությանը իրազեկելու արցախյան հիմնախնդրի էությունը:

«Ալյուս» թերթը նույնբերի սկզբի համարում պատկերում է Աստվածաշունչը ձեռքին հայ զինվոր և Արցախի հոգևոր առաջնորդ Պարզև սրբազանի նկարները: «Թեև աղբյուրները և սպարդյուն են» հովաձում թերթը գրում է.

«Այսպիսով են մնացել երեք զինադադարները, կշարունակվի համաշխարհային հասարակության անտարբերությունը հետզհետե պատերազմական հանցագործության բնույթ ստացող հարձակումների հանդեպ» [7]:

«Ալյուս»-ը ռուսական «Կոմերսանտ» թերթին հղում անելով գետեղում է ՌԴ արտգործնախարար Ս. Լավրովի հայտարարությունը, ըստ որի՝ Թուրքիայի միջնորդությամբ Ադրբեջան է տեղափոխվել և Ղարաբաղի պատերազմին է մասնակցել սիրիացի 2 հազար վարձկան [7]:

«Ալյուս»-ը նույնբերի 9-ի զինադադարի համաձայնագիրը համարում է «Պարտության համաձայնագիր», որն ամբողջությամբ տապալկում է բացի, նույն համարում գետեղում է Լևոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունը: ՀՀ առաջին նախագահի կարծիքով. «Հետպատերազմական զարգացումները կարող են հանգեցնել քաղաքացիական պատերազմի, որը մեծազույն նվեր կլինի թուրք-ադրբեջանական դաշինքին, սակայն կործանարար կլինի թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի և ողջ հայության համար»: Նա հույս է հայտնում, որ «ազգի ճակատագրով մտահոգ՝ կուսակցությունները, հասարակական-քաղաքական խմբերը, ուժային կառույցները, մտավորականության հեղինակավոր ներկայացուցիչները կօգտագործեն իրենց ողջ ազդեցությունը՝ նման աղետալի հեռանկարից խուսափելու համար» [8]:

Թերթի կարծիքով նույնբերի 9-ի համաձայնագիրը Հայաստանի քաղաքական դաշտում գահընկեց եղած նախկին իշխանությունների համար առիթ է վարչապետ Փաշինյանին և իր կառավարությանը հալածելու նպատակով [8]: Նույնբերի 9-ի ընդվզումը վերածվեց հակափաշինյանական ցույցի, ընդդիմադիրների մոտ առաջացավ «իշխանափոխության մարմաջ... որն անշուշտ անընդունելի էր», - գրում է «Ալյուս»-ը [8]:

Թերթն անդրադառնալով Հայաստանի և Արցախի պարտության պատճառներին, նշում է, որ 30 տարի առաջ հայկական կողմը հաղթանակ ունեցավ, սակայն երբ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հարց բարձրացրեց յոթ շրջաններն աստիճանաբար վերադարձնելու մասին, արժանացավ «Արցախը մաս առ մաս թշնամուն հանձնելու» մեղադրանքին և հրաժարական տվեց:

Թերթի համոզմամբ «Ազգի վերելքը պայմանավորված է հայոց երկրի զարգացումով և մինչ օրս այդ զարգացումը խանգարող գլխավոր ազդակը Արցախյան հակամարտության խաղաղ ճանապարհով լուծված չլինելն էր: Եթե ոչ այսօր, ապա մոտ ապագայում պետք է հասնենք տարածաշրջանային համերաշխության» [8]:

Ըստ «Ալյուս»-ի՝ այսօր մենք ունենք վիրավոր Արցախ, վիրավոր Հայաստան ու վիրավոր Սփյուռք և այդ վերքի սպիացումը կախված է

բացառապես հայերից, որոնք պետք է ոչ որի վրա հույս չդնեն, բացի իրենցից: Արցախի հակամարտությունը խաղաղությամբ չպսակվեց: Ապագայում մենք պետք է ունենանք տարածաշրջանային համերաշխություն, որպեսզի ապահովենք սփյուռքի ներդրումը Հայաստանի բարգավաճման գործում:

Մեր հազարամյա պատմության ընթացքում շատ անգամ ենք հող կորցրել, սակայն երբեք չենք զգացել արժանապատվության կորստի համը, «դառը անհամությունը» [9]:

«Ակօս»-ը «Նախկինները, ներկաները և «բարի» դրացիները» հողվածում հարց է բարձրացնում, թե ինչու էին մեր զինվորներն անընդհատ ստանում նահանջի հրաման, ինչու՞ Քարվաճառը և Շուշին առանց մեկ կրակոցի հանձնվեց Ադրբեջանին: Բացատրություն երևի կունենանք մեր դավաճան, ապաշնորհ իշխանությունների հեռանալուց հետո [10]: *«Թվում է թե մենք հասել ենք մեր պատմության վերջին հանգրվանին, գրում է թերթը, նախկինները մարդ չեն, այլ հայիոյանք են, նրանց վրա են բարդում բոլոր թյուրիմացությունները, մոռանալով, որ մարդը նախկին չի լինում, իշխանությունն է նախկին լինում, և ներկա իշխանության պարտության համար նախկինը պատասխանատու չէ»* [10]:

Թերթը տարեվերջին ամփոփելով 44-օրյա պատերազմի արդյունքում մեր ունեցած կորուստները նշում է, որ մեր գլխավոր կորուստը բազմահազար զինվորներն են, հողը և Հայաստանի մեջ ներքին խաղաղության վերացումը [11]:

«Ակօս»-ի կարծիքով «թավշյա հեղափոխության» արդյունքում կարգազուրկ եղած նախկին իշխանությունները փորձում են պարտության մեղքը բարդել իշխող կառավարության, հասկապես վարչապետ Ն. Փաշինյանի ուսերին: Քանի որ նրա դեմ են դուրս եկել Գարեգին Բ-ն, ով Թավշա հեղափոխությունից հետո դարձել էր հեղափոխական հոսանքի թիրախը և այժմ իր համար ուսանչի առիթ է, իսկ Արամ Ա-ն չի կարող հակասել Դաշնակցության որդեգրած քաղաքականությանը, «արդարև ստեղծված քառսային իրավիճակից դուրս գալու միակ միջոցը իշխանության շրջանում շուտափույթ ընտրությունների գնալն է» [11]:

Եզրակացություն

Հանգամանորեն անդրադառնալով արցախյան 44-օրյա պատերազմին «Ակօս» շաբաթաթերթը համակողմանի ներկայացնում է պատերազմական գործողությունների ընթացքը, ընդգծում է Թուրքիայի դերակատարությունը պատերազմում: Թերթը պատերազմի նախահարձակ կողմ համարում է Ադրբեջանին և կարծիք հայտնում, որ մի օր Ադրբեջանը ստիպված կլինի ճանաչել Արցախի անկախությունը:

Հայաստանի պարտությունը և նոյեմբերի 9-ի համաձայնագրի կնքումը ըստ «Ակօս»-ի չպետք է առիթ հանդիսանար Հայաստանում իշխանափոխության և նախկին իշխանությունների վերադարձի: Թերթի կարծիքով թեպետ Արցախի հակամարտությունը չպսակվեց հաջողությամբ, սակայն ապագայում անկասկած պետք է հաստատվի տարածաշրջանային խաղաղություն ապահովելով Սփյուռքի ներդրումը Հայաստանի բարգավաճման գործում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայ գրատպություն և գրքարվեստ, հանրագիտարան: - Երևան 2015:
2. «Ակօս» շաբաթաթերթ, Կ.Պոլիս, 02.10.2020, №1265:
3. «Ակօս» շաբաթաթերթ, Կ.Պոլիս, 09.10.2020, №1266:
4. «Ակօս» շաբաթաթերթ, Կ.Պոլիս, 16.10.2020, №1267:
5. «Ակօս» շաբաթաթերթ, Կ.Պոլիս, 23.10.2020, №1268:
6. «Ակօս» շաբաթաթերթ, Կ.Պոլիս, 30.10.2020, №1269:
7. «Ակօս» շաբաթաթերթ, Կ.Պոլիս, 06.11.2020, №1270:
8. «Ակօս» շաբաթաթերթ, Կ.Պոլիս, 13.11.2020, №1271:
9. «Ակօս» շաբաթաթերթ, Կ.Պոլիս, 20.11.2020, №1272:
10. «Ակօս» շաբաթաթերթ, Կ.Պոլիս, 18.12.2020, №1276:
11. «Ակօս» շաբաթաթերթ, Կ.Պոլիս, 25.12.2020, №1277:

Տժանա/Հանձնվել է՝ 29.11.2024
Քեչենչրրրրրր/Գրախոսվել է՝ 06.12.2024
Քրրրրրր/Ընդունվել է՝ 13.12.2024